ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 օգոստոսի 2026 թվականի N 1273 - Ա

ԳՈՒՅՔ ՆՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 594-րդ հոդվածի 1-ին մասը, «Մաքսային կարգավորման մասին» օրենքի 245-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը և 247-րդ հոդվածի 1-ին մասը, «Պետական գույքի կառավարման մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետը, 22-րդ հոդվածի 4-րդ մասը և 25-րդ հոդվածը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Մաքսային մարմինների կողմից արգելանքի վերցված (արգելապահված)՝ 2019 թվականի սեպտեմբերի 9-ի դրությամբ 1,421,636.0 ՀՀ դրամ մաքսային արժեքով, 24,000 կգ քաշով ժամկետանց յոդացված աղը (այսուհետ՝ գույք) հանձնել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեին (այսուհետ՝ կոմիտե) և նվիրել Երևան համայնքին:

2. Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի նախագահին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո մեկամսյա ժամկետում, կոմիտեի նախագահի հետ համատեղ, ապահովել գույքի հանձնման-ընդունման աշխատանք-

ների կատարումը՝ գույքն ի պահ թողնելով Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեին՝ մինչև սույն որոշման 3-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված աշխատանքների ավարտը:

3. Կոմիտեի նախագահին՝

1) սույն որոշման 2-րդ կետում նշված աշխատանքների ավարտից հետո եռամսյա ժամկետում Երևանի քաղաքապետի հետ կնքել գույքի նվիրատվության պայմանագիր.

2) սույն կետի 1-ին ենթակետում նշված աշխատանքների ավարտից հետո մեկամսյա ժամկետում, Երևանի քաղաքապետի հետ համատեղ, ապահովել գույքի հանձնման-ընդունման աշխատանքների կատարումը՝ դրա հետ կապված ծախսերն իրականացնելով Երևան համայնքի միջոցների հաշվին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

27.08.2026
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ